ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

Իրավունքի և
քաղաքականության
Ինստիտուտի տնօրեն
Մ.Ա. Քալաշյան

"12" հոկտեմբերի 2022 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի և քաղաքականության
Ամբիոն՝ Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի
Հեղինակ՝ Ղամբարյան Ա. Ս.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
Դասընթաց՝ Հարցաքննության և առերեսման տակտիկա

Մագիստրոսական ծրագիր՝ 042802.03.7 Կրիմինալիստիկա

Դասիչ մասնագիտություն՝ 042802.00.7 Իրավական ուսումնասիրություններ

ԵՐԵՎԱՆ

1. Ներածություն.

Քննչական պրակտիկայի և քրեական գործերի ուսումնասիրության արդյունքներով պարզվել է, որ քննչական ստորաբաժանումների տեխնիկական հնարավորությունների բացակայությունը, ինչպես նաև քննիչների տակտիկական-հոգեբանական գրագիտության պակասը հանգեցնում է քննության արդյունավետության նվազեցման: Շատ հաճախ նաև քննությունը տուժում է հանցագործության հանգամանքների վերլուծության մասին մոտեցումների բացակայության, առաջ քաշված վարկածների սխալ կամ ոչ ամբողջական ստուգման արդյունքում, ինչը պայմանավորված է քննիչի մոտ առկա տեղեկատվության սակավությամբ:

Ցանկացած քննչական գործողություն ունի իրական հնարավորություն ապահովելու ապացուցողական տեղեկությունների ստացում, որոնց թվում ամենաարդյունավետն է համարվում հարցաքննությունը: Հարցաքննությունը ոչ միայն առավել տարածված, այլ միաժամանակ ամենաբարդ քննչական գործողությունն է, ուստի անհրաժեշտ է դրա կատարումը հեշտացնելու նպատակով բավարարել քննիչի պահանջմունքները՝ վերջինիս զինելով աղեկվատ գործիքակազմով:

«Հարցաքննության և առերեսման տակտիկա» դասընթացի ակտուալությունը կայանում է նրանում, որ նշված քննչական գործողությունների, դրանց հնարքների ու մեթոդների ուսումնասիրությունն ու կատարելագործումը, գիտականորեն հիմնավորված նոր առաջարկների ներկայացումը կնպաստեն քննության ընթացքում ստացված տեղեկությունների օբյեկտիվության բարձրացմանը, իսկ ճիշտ նախապատրաստված և գրագետ կատարված քննչական գործողությունները հնարավորություն կտան բացահայտել իրականությունը:

2. Դասընթացի նպատակը և խնդիրը.

Դասընթացի նպատակն է ուսանողներին հիմնարար մակարդակով ծանոթացնել հարցաքննության և առերեսման օրենսդրական գործող և հայեցակարգային կարգավորումները, նախանշել այն գործիքակազմը, որն անհրաժեշտ ունենալ մինչ

քննչական գործողություն սկսելը, ներկայացնել դրանց կատարման հնարքները կախված ինչպես հարցաքննվողի անձից, այնպես էլ հանցագործության բնույթից:

2.1. Կրթական վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները **պետք է.**

իմանան՝

- հարցաքննություն և առերեսում կատարելու կարգը սահմանող ներպետական օրենսդրության և միջազգային նորմերի դրույթները,

կարողանան՝

- արդյունավետ իրականացնել քրեական գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական տվյալներ ստանալու նպատակով արդյունավետ քննչական գործողություն կատարելու համար անհրաժեշտ գործիքակազմի և հնարքների ընտրության հմտությունները,
- իրականացել հարցաքննության և առերեսման ընթացքում ստացված տեղեկությունները նույն կամ այլ հասցեատիրոջ միջոցով ստուգման ենթարկելու մասին ստացված գիտելիքները,

ունակ լինեն՝

- կիրառել առանձին հանցագործությունների վերաբերյալ հարցաքննություններ անցկացնելու առկա մոտեցումները,
- արձանագրել հարցաքննության ընթացքի ու արդյունքները,
- կիրառել քաղաքացիների առանձին խմբերի հարցաքննության տակտիկական առանձնահատկությունները:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Ուսումնական աշխատանքների տեսակները	Ամբողջը, ակ. ժամ.	Բաշխում ըստ կիսամյակների					
		1 Կիս.	2 Կիս.	3 Կիս.	4 կիս.	5 Կիս.	6 Կիս.
1	2	3	4	5	6	7	8
1.Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը	72		72				
1.1. Լսարանային պարապմունքներ:	18		18				
1.1.1.Դասախոսություններ	10		10				
1.1.2.Սեմինարներ	8		8				
1.2. Ինքնուրույն աշխատանք	54		54				
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	ստուգարք		ստուգարք				

2.3. Դասընթացի թեմատիկ պլան

Դասընթացի բաժինները և թեմաները	Ընդհանուր (ակ. ժամ)	Դասախոսություններ (ակ. ժամ)	Սեմինար (ակ. ժամ)	Պարապմունքների այլ տեսակներ (ակ. ժամ)
Թեմա 1. Հարցաքննության և առերեսման ընդհանուր դրույթները	15	2	1	12
Թեմա 2. Հարցաքննության և առերեսման փուլերը				
Թեմա 3. Հարցաքննության և առերեսման նախապատրաստությունը, պլանավորումը				
Թեմա 4. Կասկածյալի և մեղադրյալի հարցաքննության տակտիկայի	11	2	1	8

Թեմա 5. Տուժողի և վկայի հարցաքննության տակտիկայի առանձնահատկությունները				
Թեմա 6. Փորձագետի և մասնագետի հարցաքննության տակտիկայի	**16**	**2**	**2**	**12**
Թեմա 7. Անչափահասների հարցաքննության տակտիկայի առանձնահատկությունները				
Թեմա 8. Առանձին տեսակի հանցագործությունների քննության ընթացքում հարցաքննության տակտիկայի առանձնահատկությունները	**12**	**2**	**2**	**8**
Թեմա 9. Հարցաքննության ընթացքի ու արդյունքների արձանագրումը				
Թեմա 10. Տեսաձայնագրառման եղանակով կատարվող հարցաքննություն	**18**	**2**	**2**	**14**
Թեմա 11. Առերես հարցաքննության տակտիկա				
Թեմա 12. Տուժողի, վկայի և ամբաստանյալի հարցաքննության տակտիկան դատարանում				
Ընդամենը	**72**	**10**	**8**	**54**

3.Դասընթացի բաժինները և թեմաները

Թեմա 1. Հարցաքննության և առերեսման ընդհանուր դրույթները

Հարցաքննության և առերեսման հասկացությունը և տեսակները: Հարցաքննության և առերեսման նշանակությունը: Վկայի, տուժողի, կասկածյալի, մեղադրյալի հարցաքննությունը: Անչափահասի հարցաքննությունը: Հարցաքննության և առերեսման նշանակությունը:

Թեմա 2. Հարցաքննության և առերեսման փուլերը:

Հարցաքննության հոգեբանական նախապատրաստում: Հարցաքննության իրականացում: Հոգեբանական ազդեցության մեթոդների կիրառում: Հարցաքննության արդյունքների ամրագրումը: Հարցաքննության արդյունքների վերլուծություն և գնահատում: Հարցաքննության և առերեսման նպատակներին հասնելու համար հոգեբանական կոնտակտի հաստատման նշանակությունը: Հարցաքննության ընթացքում կիրառվող տակտիկական հնարքների թույլատրելիության չափանիշները:

Թեմա 3. Հարցաքննության և առերեսման նախապատրաստությունը, պլանավորումը:

Հարցաքննության նախապատրաստությունը և պլանավորումը՝ քրեական գործի նյութերի ուսումնասիրությունը, ցուցմունքներ ստանալու համար անհրաժեշտ հանգամանքների շրջանակի որոշումը, հարցաքննվողի հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը, օրենքով նախատեսված անձանց, ինչպես նաև մասնագետների մասնակցության ապահովումը, անհրաժեշտ գիտատեխնիկական միջոցների նախապատրաստումը: Հարցաքննվողին տրվող հարցերի տեսակները: Հարցաքննության և առերեսման ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցները: Առերեսման նախապատրաստությունը, պլանավորումը՝ առերեսումից առաջ անհրաժեշտ է հանգամանորեն ուսումնասիրել հարցաքննվողների ցուցմունքները, հաշվի առնել նրանց փոխհարաբերությունները, պարզել ծագած հակասությունների էությունը, նախանշել այն հարցերը, որոնք պետք է ուղղվեն, դրանց հաջորդականությունը և լուծել այն հարցը, թե ով է առաջինը հարցաքննվելու առերեսման ժամանակ:

Թեմա 4. Կասկածյալի և մեղադրյալի հարցաքննության տակտիկայի առանձնահատկությունները:

Կասկածյալի և մեղադրյալի հարցաքննության հասկացությունը և հոգեբանական հիմքերը: Կասկածյալի հարցաքննության ժամանակ տիպիկ քննչական իրավիճակները: Հարցաքննության և առերեսման տակտիկան կոնֆլիկտային իրավիճակներում:

Հարցաքննության և առերեսման տակտիկան կոնֆլիկտային իրավիճակների բացակայությամբ: Սուտ ցուցմունքի բացահայտման հնարքները: Հարցաքննվողին անկեղծ խոստովանության և ճշմարիտ ցուցմունք տալու նշանակության պարզաբանումը: Հարցաքննվողի ցուցմունքների առավելագույն մանրամասնումն ու հստակեցումը: Հարցաքննվողի դրական հատկանիշների խթանումը: Հանցակիցների տարաձայնությունների օգտագործումը (եթե հանցագործությունը կատարվել է մի խումբ անձանց կողմից): Ապացույցներ ներկայացնելը:

Թեմա 5. Տուժողի և վկայի հարցաքննության տակտիկայի առանձնահատկությունները;

Տուժողների և վկայի հարցաքննության տակտիկական ընդհանուր դրույթները: Տուժողների եւ վկաների ցուցմունքների ձեւավորման առանձնահատկությունները: Վկաների եւ տուժողների հարցաքննության հիմնական փուլերը: Կյանքի եւ առողջության դեմ ուղղված հանցագործությունների քննության ժամանակ վկայի և տուժողի հարցաքննության տակտիկական առանձնահատկությունները: Սեփականության դեմ հանցագործությունների քննության ժամանակ վկայի և տուժողի հարցաքննության տակտիկական առանձնահատկությունները: Կոռուպցիոն հանցագործությունների քննության ժամանակ վկայի և տուժողի հարցաքննության տակտիկական առանձնահատկությունները:

Թեմա 6. Փորձագետի և մասնագետի հարցաքննության տակտիկայի առանձնահատկությունները;

Փորձագետի և մասնագետի հարցաքննության հասկացությունը և նպատակը: Հարցաքննության ժամանակ փորձագետին տրվող հարցերը՝ կատարված փորձաքննության գիտական հիմքերը, տվյալ փորձաքննության կատարման ժամանակ փորձագետի կողմից օգտագործված մեթոդիկաների գիտական հիմնավորվածությունը, մեթոդիկաների ընտրության և կիրառման ճշտությունը, փորձագետի եզրակացությունների գիտական արժանահավատության աստիճանը,

եզրակացությունների հավաստիությունը, եզրակացությունների հիմնավորվածությունը: Հարցաքննության ժամանակ մասնագետին տրվող հարցերը:

Թեմա 7. Անչափահասների հարցաքննության տակտիկայի առանձնահատկությունները;

Անչափահասի հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրություն, հարցաքննության համապատասխան վայրի և ժամանակի ընտրություն: Անչափահասի կենսապայմանների, դպրոցում առաջադիմության, ծնողների հետ փոխհարաբերությունների ուսումնասիրությունը որպես անչափահասի հարցաքննության անհրաժեշտ նախադրյալ: Մանկավարժի, հոգեբանի կամ օրինական ներկայացուցիչների մասնակցությունը հարցաքննությանը: Անչափահասի հարցաքննությունը “ազատ պատմվածքի” տեսքով: Կեղծ ցուցմունքներ հայտնաբերելու նպատակով անչափահասին կրկին հարցաքննելու անհրաժեշտության մասին: Քննչական գործողությունների ընթացքում տեսագրության կիրառումը:

Թեմա 8. Առանձին տեսակի հանցագործությունների քննության ընթացքում հարցաքննության տակտիկայի առանձնահատկությունները

Կազմակերպված հանցավորության հետաքննության ժամանակ հարցաքննության տակտիկական առանձնահատկությունները: Սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործությունների քննության ժամանակ հարցաքննության մարտավարության առանձնահատկությունները: Անձի կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների քննության ժամանակ հարցաքննության մարտավարության առանձնահատկությունները: Կոռուպցիոն հանցագործությունների քննության ժամանակ հարցաքննության մարտավարության առանձնահատկությունները: Էկոլոգիական հանցագործությունների քննության ժամանակ հարցաքննության մարտավարության առանձնահատկությունները:

Թեմա 9. Հարցաքննության ընթացքի ու արդյունքների արձանագրումը:

Հարցաքննության արձանագրության հասկացությունը: Հարցաքննության արձանագրությանը ներկայացվող պահանջները: Հարցաքննության արձանագրության կառուցվածքը: Արձանագրության ներածական մասը: Արձանագրության նկարագրական մասը: Արձանագրության եզրափակիչ մասը: Հարցաքննության արձանագրության մեջ արտացոլվող տեղեկությունները:

Թեմա 10. Տեսաձայնագրառման եղանակով կատարվող հարցաքննություն;

Իրավիճակները, որոնց դեպքում քրեագիտական տակտիկական տեսանկյունից նպատակահարմար է հարցաքննության ժամանակ տեսաձայնագրառման կիրառումը՝ հարցաքննություն թարգմանչի մասնակցությամբ, հոգեկան զարգացման անոմալիաներով անձի հարցաքննությունը, ֆիզիկական թերություններով անձանց հարցաքննությունը, օրինակ ՝ խոսքի թերությունների, խուլ ու համր; հարցաքննություն, որի անցկացման ժամանակ օգտագործվում են այնպիսի, օրինակ, տակտիկական հնարքները, ինչպիսիք են քարտեզի վրա հարցաքննվող ուղու ցուցադրումը կամ տեղանքում օբյեկտների (կառույցների) տեղակայման նկարում պատկերված ցուցադրումը: Հարցաքննության տեսաձայնագրառմանը ներկայացվող պահանջները:

Թեմա 11. Առերես հարցաքննության տակտիկա

Առերեսման պահի ընտրությունը: Առերեսման մասնակիցների հնարավոր վարքագծի որոշումը, միմյանց վրա ունեցած ազդեցությունը, մեկ մասնակցի կողմից մյուսի համար ցուցմունքների փոփոխության հավանականության գնահատումը: Առերեսման առարկայի, այսինքն ՝ վիճելի հանգամանքների պարզաբանման ենթակա շրջանակի որոշումը: Ապացույցների և այլ նյութերի նախապատրաստումը, որոնք կարող են պահանջվել առերեսման ընթացքում:

Թեմա 12. Տուժողի, վկայի և ամբաստանյալի հարցաքննության տակտիկան դատարանում:

Դատարանում հարցաքննության հիմնական հատկանիշները: Հիմնական և լրացուցիչ դատական հարցաքննությունը: Խաչաձև և "շախմատային" դատական

հարցաքննությունը: Մեղադրանքի և պաշտպանության տեսանկյունից հարցաքննվողի ցուցմունքների ճշմարտացիության եւ ամբողջականության ստուգումը:

4. Տեսական բլոկ

Գրականության ցանկ (պարտադիր և լրացուցիչ)

Իրավական փաստաթղթեր

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015թ. խմբ.):
2. ՀՀ օրենքը «Զենքի մասին», ընդունված է Ազգային Ժողովի կողմից 3 հուլիսի 1998 թ.
3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային Ժողովի կողմից *1* հուլիսի 1998 թ.
4. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային Ժողովի կողմից 30.06.2021 թ.

Պարտադիր գրականություն

1. Ենգիբարյան Վ.Գ.. Առանձին տեսակի հանցագործությունների քննության մեթոդիկա: Եր.: ԵՊՀ հրատ., 2009,
2. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս / Ղազինյան Գ.Ս. և ուրիշ.- 4-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով.-Եր: ԵՊՀ հրատ, 2019
3. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ): Մաս 2 / Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա. Ղամբարյան. – Եր.: Տիգրան Մեծ, 2017
4. Վարդանյան Ա. Ժ., Սուտ ցուցմունքների կանխման և մերկացման հիմնահարցերը, ատենախոսություն ի.գ.թ. գիտական աստիճանի հայցման, Երևան, 2005
5. Օհանյան Լ.Պ. Կրիմինալիստիկա: Բուհական դասագիրք. (2-րդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումներով).- Եր.- ԵՊՀ հրատ., 2010
6. Ենգիբարյան Վ.Գ. Ցուցմունքի ձեվավորման հոգեբանական գործընթացի փուլերն ու դրանց նշանակությունը հարցաքննության տակտիկայի համատեքստում // ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու, 1(3) 2019, ԵՊՀ; գլխ. խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան, Երևան, ԵՊՀ, 2020, էջ 257-270.

7. Ավագյան Է. Տուժողի հարցաքննության առանձնահատկությունները խոշտանգման գործերով | Դատական իշխանություն, Հայաստան, 1829-0744, 64-72 էջ, 2018
8. Աղաբաբյան Ն. Խ. Քրեական դատավարությունում անչափահաս անձի հարցաքննության առանձնահատկությունները | «ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2014թ. նստաշրջանի նյութերի ժողովածու», ԵՊՀ հրատ., Երևան, 2015, էջեր 446-457
9. Դիլբանդյան Ս. Հարցաքննության առանձնահատկությունները քրեական դատավարության դատական քննության փուլում | Գիտաժողովի նյութերի ժողովածու նվիրված Շ.Ն. Պետրոսյանի ծննդյան 100-ամյակին/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան. – Եր.:ԵՊՀ հրատ., 2013, էջ 159-170:
10. Դիլբանդյան Ս. Ա. Մանկավարժի մասնակցությունը անչափահասի հարցաքննությանը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում | Օրենք և իրականություն, թիվ 2,(184), 2011թ., էջեր 10-12:
11. Օհանյան Լ. Պ., Ենգիբարյան Վ. Գ. Կրիմինալիստիկայի խնդիրների ժողովածու | Երևան, ԵՊՀ հրատ., 2007, 120 էջ
12. Журавлева, И. А. Тактика допроса несовершеннолетних свидетелей и потерпевших: учеб. пособие / И. А. Журавлева, Т. В. Каскевич. - Крас-ноярск : ИПК СФУ, 2009
13. Зорин Г. А., Руководство по тактике допроса. М., 2001
14. Порубов Н. И., Тактика допроса на предварительном следствии. М., 1998

Նախադեպեր

1. Ունտերպերտինգերն ընդդեմ Ավստրիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 1986 թվականի նոյեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 9120/80
2. Սադակը և ուրիշներն ընդդեմ Թուրքիայի (թիվ 1) գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2001 թվականի հուլիսի 17-ի վճիռը, գանգատներ թիվ 29900/96

3. Հուլկի Գյունեշն ընդդեմ Թուրքիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2003 թվականի հունիսի 19-ի վճիռը, գանգատ թիվ 28490/95,
4. Գոսսան ընդդեմ Լեհաստանի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2007 թվականի հունվարի 9-ի վճիռը, գանգատ թիվ 47986/99,
5. Բալսիտե-Լիդեիկյենեն ընդդեմ Լիտվայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2008 թվականի նոյեմբերի 4-ի վճիռը, գանգատ թիվ 72596/01,
6. Չական ընդդեմ Ալբանիայի գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 8-ի վճիռը, գանգատ թիվ 44023/02,
7. Համայակ Զալիկոյի Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԴ/0212/01/10 որոշում,
8. Սարիբեկ Վարազդատի Հարությունյանի գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԱՔԴ0189/01/12 որոշում

Լրացուցիչ գրականություն

1. Антипова С.А. Особенности тактики допроса лиц с дефектами психики // Следователь. 2002. № 4.
2. Веснина С.Н. Криминалистическая характеристика различных типов потерпевших и особенности тактики их допроса: Автореф. дис. . канд. юрид. наук. Саратов, 2002.
3. Гриненко А.В. Процессуальные средства установления психологического контакта с обвиняемым // Российский следователь. 2001. № 5.
4. Зайцева И.А. Особенности тактики допроса обвиняемого, подозреваемого на предварительном следствии при участии адвоката-защитника // Российский следователь. 2001.
5. Образцов В. А., Следованные действие, М., 2001
6. Ратинов А. Р., Судебная психология для следователей, М., 1967
7. Рзаев Т.Ю. Современные проблемы теории и практики допроса: Автореф. дис. . канд. юрид. наук. М., 2002.

8. Следственные действия, Криминалистические рекомендации, Типовые образцы документов, Под ред. В. А. Образцова, М., «Юристъ», 2001
9. Соловьев А.Б. Использование доказательств при допросе на предварительном следствии: Методическое пособие. М., 2001.
10. Хабибуллин М. Х., Личность лжесвидетеля и лжедоносчика, Казань, 1972
11. Ларин А. М., Расследование по уголовному делу. Планирование, организация. М., 1970,
12. Герасимов И. Ф., Некоторые проблемы раскрытия преступлений. Свердловск. СЮИ, 1975,;
13. Уголовный процесс России /Под ред. З. Ф. Ковриги и Н. П. Кузнецова, Воронеж, ВГУ, 2003,
14. Казинян Г. С., Соловьев А. Б., Проблемы эффективности следственных действий, Ереван, ЕГУ, 1987,
15. Шейфер А. С., Следствнные действия. Основания, процессуальный порядок и доказательственное значение, М., 2004,
16. Кальиницкий В. В., Следственные действия. Омск: Омская академия МВД РФ, 2003,
17. Соловьев А. Б., Процессуальные, психологические и тактические основы допроса на предварительном следствии, М., 2002;
18. Сафин Н. Ш., Допрос несовершеннолетного подозреваемого в советском уголовном судопроизводстве (процессуальный и криминалистический аспекты проблемы), Казань, 1990
19. Шимановский В. В., Процессуальные особенности расследования преступлений несовершеннолетних, Волгоград, 1980
20. Ուսումնական ֆիլմաշար. Հարցաքննության տակտիկական առանձնահատկությունները. Հարցաքննության տակտիկական սխալներ (տեսանյութ)՝ https://www.investigative.am/news/view/harcaqnnutyan-taktikakan-sxalner.html [Էլեկտրոնային ռեսուրս]

5.Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում. Նպատակը. մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր և տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

Գնահատման չափանիշները՝ պլանի առկայություն և դրան հետևելու կարողություն, տեսական և իրավական աղբյուրների օգտագործման էթիկա, հղումների ճշգրտություն, տեսակետների պատճառաբանվածություն:

Թեստավորում. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները:

Վերջնական քննություն. Նպատակը՝ ստուգել և գնահատել ուսանողների գիտելիքները:

6. Պրակտիկ բլոկ

Սեմինար և պրակտիկ պարապմունքների պլան:

Պարապմունքի տեսակ – տրամաբանական հարցերի և խնդիրների լուծում:

Ստուգման ձևը: բանավոր հարցում:

Թեմա 1. Հարցաքննության և առերեսման հասկացությունը և տեսակները: Հարցաքննության և առերեսման նշանակությունը:

Թեմա 2. Հարցաքննության և առերեսման փուլերը: Հարցաքննության և առերեսման նպատակներին հասնելու համար հոգեբանական կոնտակտի հաստատման նշանակությունը: Հարցաքննության ընթացքում կիրառվող տակտիկական հնարքների թույլատրելիության չափանիշները;

Թեմա 3. Հարցաքննության և առերեսման նախապատրաստությունը, պլանավորումը: Հարցաքննվողին տրվող հարցերի տեսակները: Հարցաքննության և առերեսման ընթացքում կիրառվող տեխնիկական միջոցները;

Թեմա 4. Կասկածյալի և մեղադրյալի հարցաքննության տակտիկայի առանձնահատկությունները: Հարցաքննության և առերեսման տակտիկան կոնֆլիկտային իրավիճակներում: Հարցաքննության և առերեսման տակտիկան կոնֆլիկտային իրավիճակների բացակայությամբ: Սուտ ցուցմունքի բացահայտման հնարքները;

Թեմա 5. Տուժողի և վկայի հարցաքննության տակտիկայի առանձնահատկությունները;

Թեմա 6. Փորձագետի և մասնագետի հարցաքննության տակտիկայի առանձնահատկությունները;

Թեմա 7. Անչափահասների հարցաքննության տակտիկայի առանձնահատկությունները;

Թեմա 8. Առանձին տեսակի հանցագործությունների քննության ընթացքում հարցաքննության տակտիկայի առանձնահատկությունները;

Թեմա 9. Հարցաքննության ընթացքի ու արդյունքների արձանագրումը: Հարցաքննության արձանագրությանը ներկայացվող պահանջները;

Թեմա 10. Տեսաձայնագրառման եղանակով կատարվող հարցաքննություն;

Թեմա 11. Առերես հարցաքննության տակտիկա: Կոնֆրոնտացիայի իրավունքը նախաքննության փուլում;

Թեմա 12. Տուժողի, վկայի և ամբաստանյալի հարցաքննության տակտիկան դատարանում:

Մագիստրոսական թեզի թեմաների հնարավոր ցանկ

1. Հարցաքննության տեսական և գործնական հիմնախնդիրները:
2. Անչափահաս կասկածյալի և մեղադրյալի հարցաքննության տակտիկայի առանձնահատկությունները:
3. Կոնֆրոնտացիայի իրավունքի ապահովումը մինչդատական քրեական վարույթի փուլում:

4. Հարցաքննության և առերեսման տակտիկան կոնֆլիկտային իրավիճակներում:

7. Մեթոդական բլոկ

Ինքնուրույն աշխատանքի մեթոդական ապահովումը.

Ուսուցման մեթոդները դասախոսի և ուսանողների համատեղ գործունեության միջոցներ են՝ ուղղված կրթական նպատակների ձեռքբերմանը:

Ուսուցման մեթոդներն իրենց մեջ ներառում են դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդներ:

Դասավանդման մեթոդների օգնությամբ հաղորդվում են գիտելիքներ, ձևավորվում են կարողություններ և հմտություններ: Ուսումնառության մեթոդների օգնությամբ ուսանողները ձեռք են բերում անհրաժեշտ գիտելիքներ, ձևավորվում կարողություններ և հմտություններ: Գնահատման մեթոդները միտված են արժանահավատ կերպով ուսանողների կողմից կրթական վերջնարդյունքների ձեռքբերման չափմանը:

Այս մեթոդները փոխկապված են և շատ դեպքերում դասավանդման մեթոդը կարող է հանդես գալ որպես ուսումնառության մեթոդ կամ նաև գնահատման մեթոդ:

Դասավանդման և ուսումնառության մեթոդները պետք է.

- լավագույնս նպաստեն կրթական վերջնարդյունքների ձևակերպված գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձեռքբերմանը ուսանողների կողմից,
- կիրառվեն ուսանողների գիտելիքների և ընդունակությունների տարբեր մակարդակներում,
- լինեն բազմատեսակ,
- խրախուսեն ուսանողների ակտիվությունը լսարանում, ինքնուրույնությունը և տրամադրեն խմբային աշխատանքի հնարավորություններ, ըստ անհրաժեշտության,
- համապատասխանեն ուսուցման նպատակներին,
- ավելի արդյունավետ բացահայտեն նյութի բովանդակությունը,
- նպաստեն ուսանողների և դասախոսների արդյունավետ հաղորդակցմանը,

- համապատասխանեն նյութատեխնիկական բազայի հնարավորություններին,
- դասախոսների մասնագիտական կարողություններին և թեմային հատկացված ժամաքանակին:

Ժամանակակից դիդակտիկայում գոյություն ունեն մեթոդների տարբեր դասակարգումներ: Վերջին ժամանակներում դասավանդման կարևոր պահանջներից է ուսանողների ակտիվության ու մասնակցության ապահովումը ուսուցման գործընթացում: